

Նպատակ

Երեխա ունեցող ընտանիքներին բնակելի անշարժ գույք ձեռքբերելու նպատակով կանխավճարի ապահովագրության նպատակով դրամական աջակցության տրամադրում

Դրամական աջակցության չափ

1) Երկրորդային շուկայի դեպքում գույքի արժեքի 30%-ի և հաճախորդի կողմից կատարված կանխավճարի տարբերության չափով, ընդ որում,

- դիմողի կողմից կատարվող կանխավճարի նվազագույն չափ նվազագույնը պետք է կազմի 10%,
- յուրաքանչյուր տարի տրամադրվող գումարի չափը կազմում է տարեկան ապահովագրավճարի 90%, սակայն ոչ ավել, քան 180 000 դրամը,
- ապահովագրման ենթակա գումարը չի գերազանցում 6 մլն դրամը

2) Առաջնային շուկայի դեպքում գույքի արժեքի 20%-ի և հաճախորդի կողմից կատարված կանխավճարի տարբերության չափով, ընդ որում.

- դիմողի կողմից կատարվող կանխավճարի նվազագույն չափ նվազագույնը պետք է կազմի 7.5%,
- յուրաքանչյուր տարի տրամադրվող գումարի չափը կազմում է տարեկան ապահովագրավճարի 90%, սակայն ոչ ավել, քան 180 000 դրամը,
- ապահովագրման ենթակա գումարը չի գերազանցում 3 մլն դրամը

Հիմնական պայմաններ

- 1) դիմողի խնամքին առկա է առնվազն 1 անչափահաս երեխա,
- 2) անշարժ գույքը ձեռք է բերվում 01.07.2020թ. հետո,
- 3) անշարժ գույքի գնահատված և շուկայական արժեքը չի գերազանցում 30 մլն դրամը, իսկ 3-րդ և հաջորդ երեխայի դեպքում նշված սահմանաչափն ավելացվում է ևս 5 մլն դրամով, դիմողի կողմից կատարվող կանխավճարի նվազագույն չափը երկրորդային շուկայի դեպքում կազմում է 10%, իսկ առաջնային շուկայի դեպքում՝ 7.5: